ամրոց և բերդ մինչև մի ունիցի հրաման իշխանացէ թէ ամրոցի և եթէ բերդի։

## ԳԼՈՒԽ ՇԺԵ.

Երեկոյեան 9 ժամին փակեսցի դրունն ամրոցաց և բերդօրէից, միմիայն մնասցէ բաց դրանիկն որում հետևակ միայն ունիցի ելևմուտս իւրեանց մինչև 'ի մետասան ժամ գիշերոյ, յետ մետասան ժամն հնչելոյ նաև փակեսցի դռնիկն և երկուս պահակս ելցեն 'ի գլուխ դռան տքնելով զգուշութեամբ մինչև 5 ժամ առաւօտն, յետ հնչմանէ 5 ժամուն հարիւրապետ մի առնայցէ բանալիքն դրան ամրոցի 'ի բերդապանէ և բացցէ դրունն զի կալով մնասցէ բաց մինչև կրկին 'ի 9 ժամ երեկուն։

## ԳԼՈՒԽ ՇԺԶ.

Փակիլն դռան ամրոցաց պարտ է լինիլ 'ի ձեռամբ հարիւրապետի միոյ, բանալիքն նորին ձեռօք յանձնեսցի 'ի ձեռս բերդապանին, նմանապէս առաւօտեան բանալն։

## ԳԼՈՒԽ ՇԺԷ.

Ամենայն պահակ եթէ 'ի դրունս ամրոցաց, եթէ 'ի վառօդի եթէ 'ի դրունս իշխանաց, եթէ